ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«07» 10 2022 թ.

№ ՎՁԱՊ/2-1372

«Մուէնքո» ՍՊԸ-ի տնօրենին
ՀՎՀՀ 04214892
ՀՀ ք.Երևան, Նար-Դոս 75

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մուէնքո» ՍՊԸ միջև 22.04.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-7/12-2 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր 2022թ. 2-րդ եռամսյակում մատակարարել 200 կգ 15W50 տեսակի յուղ, սակայն «Մուէնքո» ՍՊԸ-ն մատակարարել է պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, որը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չի ընդունվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը՝ (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) ՀՀ պաշտպանության նախարարությունը **07.10.2022թ.-ին** միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը վերը նշված ապրանքի մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ «Մուէնքո» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել ***15725 ՀՀ դրամ***՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և **2808** ***ՀՀ դրամ***՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին ենթակա է գանձման **56160** ***ՀՀ դրամ***, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին ենթակա է գանձման **84240 ՀՀ դրամ** որակավորման ապահովում և ՀՀ պաշտպանության նախարարության **900011144079** գանձապետական հաշվեհամարին ենթակա է գանձման **8500 ՀՀ դրամ**՝ յուղի հետազոտությունների և փորձարկումների համար իրականացված ծախսերի դիմաց՝ համաձայն N ԳՀԱՊՁԲ-22-7/12-2 ծածկագրով գնման պայմանագրի N 1 հավելվածի ծանոթության 5-րդ կետի:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե մինչև 2022թ. հոկտեմբերի 14-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված վճարման ենթակա գումարները, ապա ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2075 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ